

ABB - ԱԳՐՈ

ԳՏՏԶ ԾԻԳ ՊՀ Գյուղական Ֆինանսավորման Կառույցի կողմից իրականացվող
 «Այգեգործության ֆինանսավորման ծրագրի» շրջանակներում տրամադրվող վարկեր

1 Պայմաններ	
1.1	Արժույթ ՀՀ դրամ
1.2	Տարեկան անվանական տոկոսադրույք 5%
1.3	Պարտավորություն/ գրավ հարաբերակցություն <ul style="list-style-type: none"> ▪ Ավանդային և բանկային հաշվիվներում առկա դրամական միջոցների մինչև 100%-ի չափով, ընդ որում՝ նույն արժույթի դրամական միջոցների՝ մինչև 100%-ի չափով, տարբեր արժույթների դեպքում՝ մինչև 95%-ի չափով, ▪ Անշարժ գույքի դեպքում՝ մինչև 70%-ի չափով, ▪ Շարժական գույքի դեպքում՝ մինչև 50%-ի չափով, ▪ Ապրանքանյութական պաշարների դեպքում՝ մինչև 30%, սակայն տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 30%, ▪ Դրամական հոսքերի դեպքում՝ ոչ ավելի, քան բանկային հաշիվներով իրականացվող վերջին 12 ամիսների միջին ամսական գուտ կրեդիտային շրջանառության 50 տոկոսի չափով: Տվյալ գրավատեսակի մասնաբաժինը առաջարկվող գրավի կառուցվածքում չի կարող գերազանցել 80%: Միջին ամսական գուտ կրեդիտային շրջանառությունը հաշվարկվում է վերջին 12 ամսվա կտրվածքով, իսկ 12 ամսից պակաս Բանկի հաճախորդ լինելու պարագայում՝ վերջին 6 ամսվա կտրվածքով:
1.4	Ժամկետ <p>Ըստ պտղատեսակների 48-96 ամիս, եթե շրջանառու միջոցների ֆինանսավորման մասը կազմում է վարկի ընդհանուր գումարի 20%-ը և ավելին, Ըստ պտղատեսակների 72-120 ամիս, եթե շրջանառու միջոցների ֆինանսավորման մասը կազմում է վարկի ընդհանուր գումարի մինչև 20%-ը</p>
1.5	Արտոնյալ ժամկետ <ul style="list-style-type: none"> • Նոր տնկարկների հիմնում՝ մինչև այգու լրիվ բերքատվություն • Առկա պտղաբեր այգիների տեխնոլոգիական արդիականացում՝ առավելագույնը 12 ամիս • Առկա նորատունկ այգիների տեխնոլոգիական արդիականացում՝ մինչև այգու լրիվ բերքատվություն
1.6	Մարման եղանակ <p style="text-align: center;">Տոկոսները՝ ամենամսյա, մայր գումարի մարումները՝ կախված բիզնեսի առանձնահատկություններից</p>
1.7	Գումար 1,000,000-80,000,000 ՀՀ դրամ
1.8	Վաղաժամկետ մարման տույժ, տուգանք Չի կիրառվում
1.9	Գործողության տարածք <p style="text-align: center;">ՀՀ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց Ձորի, Տավուշի, Սյունիքի, Լոռու մարզեր</p>
1.10	Ֆինանսավորման նպատակ <ul style="list-style-type: none"> Խաղողի, խնձորի, ծիրանի, դեղձի, սալորի և շլորի, ընկույզի և տանձի՝ ✓ առկա այգիների տեխնոլոգիական արդիականացում ✓ նոր այգիների հիմնում ✓ հիմնված այգիների ձեռքբերում
2 Բանկի միջնորդավճար	
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միջնորդավճար 0 ՀՀ դրամ
2.2	Սպասարկման միջնորդավճար <p style="text-align: center;">Մինչև 49 ամիս ժամկետի դեպքում՝ 0,5% 49-84 ամիս ժամկետի դեպքում՝ 1% 85-120 ամիս ժամկետի դեպքում՝ 1.5%</p>
2.3	Վարկային միջոցների կանխիկացման 0 ՀՀ դրամ

	միջնորդավճար	
3	Ապահովվածություն	
3.1	Գրավի առարկա	Ավանդային և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ, անշարժ և շարժական գույք, հիմնական միջոցներ, երաշխիքներ և երաշխավորություններ, արժեթղթերի գրավ, բաժնետոմսի գրավ, բաժնեմասի գրավ, փայի գրավ, դրամական հոսքեր (դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք), շրջանառու միջոցներ, իրավունքի գրավ, խառը գրավ և Բանկի կողմից ընդունելի այլ գրավ:
3.2	Լրացուցիչ պայման	Բնակելի նշանակության անշարժ գույքի գրավադրման ժամանակ Գրավատուն ներկայացնում է սեփականության իրավունքի ծագման հիմքերը, և եթե դրանք Գրավատուին են փոխանցվել նվիրատվության գործարքի հիման վրա և սեփականությունը փոխանցվել է Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացնելուն նախորդող հինգ տարվա ընթացքում, ապա. 1. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ նվիրատուի երաշխավորություն, ընդ որում տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 50%-ը, կամ 2. պահանջվում է լրացուցիչ ապահովվածություն՝ երրորդ անձի երաշխավորություն, ընդ որում վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված լիկվիդային արժեքի 25%-ը: * սույն ենթակետը կիրառելի չէ, եթե Վարկի ստացման վերաբերյալ դիմում-հայտի ներկայացման պահին նվիրատուն մահացած է:
3.3	Պարտադիր պայման	✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ մասնակցի (մասնակիցների) 100% բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի պարտադիր գրավադրում: ✓ Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ 10% և ավել բաժնետոմս, բաժնեմաս, փայ ունեցող մասնակցի (մասնակիցների) կողմից երաշխավորության պարտադիր տրամադրում:
4	Գրավի գնահատում և ապահովագրություն	
4.1	Գրավի արժեքի գնահատում	Անշարժ և շարժական գույքերի, հիմնական միջոցների, շրջանառու միջոցների գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից: Արժեթղթերի, Բանկի կողմից ընդունելի այլ գույքերի և իրավունքի գնահատումը իրականացվում է Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների կողմից՝ ըստ անհրաժեշտության:
4.2	Ապահովագրություն	Ըստ անհրաժեշտության
5	Վարկառուի նկատմամբ պահանջներ	
5.1	Վարկառու	Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, ովքեր նշված տարածքներում 0,3-3 հա խաղողի, խնձորի, ծիրանի, դեղձի, սալորի և շլորի, ընկույզի և տանձի մրգատու այգիներ ունեն կամ վարձակալող տնտեսվարողներ են կամ ներկայացնում են ծրագիր նշված տարածքներում մրգատու այգիներ հիմնելու համար:
5.2	Վարկառուին ներկայացվող պահանջներ	Վերջին 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակ՝ ոչ ավել, քան 36 օր (եթե Վարկառուի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 3 օրը՝ կուտակային սկզբունքով). Վարկառուի սեփական ներդրումները պետք է կազմեն նվազագույնը ծրագրի գումարի 20%-ը, բացառությամբ խաղողի այգիների մշակության համար տրամադրվող վարկերի, որոնց դեպքում անհրաժեշտ են 40% սեփական ներդրումներ: Ընդ որում՝ սեփական ներդրումները կարող են կատարվել ինչպես կանխիկ ֆինանսական միջոցների, այնպես էլ այգու հիմնական և տեխնոլոգիական արդիականացման համար անհրաժեշտ հիմնական և շրջանառու միջոցների հաշվին:
5.3	Լրացուցիչ պայման	Վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքում

		ստացվող ֆինանսական ցուցանիշները պետք է բավարարեն Բանկի պահանջներին:
6	Երաշխավորի նկատմամբ պահանջներ	
6.1	Երաշխավոր	ՀՀ-ում կամ ԼՂՀ-ում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ֆիզիկական անձ
6.2	Երաշխավորին ներկայացվող պահանջներ	<ul style="list-style-type: none"> • Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր և 21-63 տարեկան ֆիզիկական անձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով). • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 36 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով), (եթե Երաշխավորի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 3 օրը՝ կուտակային սկզբունքով):
7	Լրացուցիչ պայմաններ	
7.1	Ժամկետանց գումարի տոկոսադրույք	ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկ
7.2	Ժամկետանց տոկոսի տույժ	0,13% օրական